

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մեր մամուլի անվերապահ դուրսիւնը.—Սոս Ժնոնդ եւ շուսպոյրք մահացումներ.—Մրցումիւն դիմանալու յասկոչիւններ.—Գրական աշխատանքի վարձատրութեան հարցը.—Ընթերցողի եւ հրատարակչի պահանջները.—Ընկերակցութեան նշանակութիւնը հրատարակչական գործում.—Իրամական եւ հասարակական շահ.—Վրացիւն ընթոնել հասարակական շահը.—Վրաց ազնւականների ժողովները.—Դասակարգային շահ.—Գիշատանքական միջնակարգ դպրոց եւ պոլիտեխնիկում.—Ջալրովի սպանութիւնը:

Հայոց կոնսիստորիայի 400,000 տուրքու պահանջը ժողովրդական շուսաւորութեան միւսխոսութիւնից:—Հայոց դրամասիրական ընկերութեան ընդհանուր ժողովը:—Պաշտօնական հաղորդագրութիւններ.—Ջրատուշի դէպքը.—Նահանգապետ Բոգդանովիչի սպանութիւնը.—Դասաւորի հեռացումը պաշտօնից Փիկանդիայում.—Ներքին գործ. միւսխոսի շրջաբերականը Քիշինեւի շարդի մասին.—Անկարգութիւններ Թիֆլիսում եւ Բագուում.—Մայրենի լեզուով կրօնի դասաւանդութիւն Լեհաստանի միջնակարգ դպրոցներում:—Մամուլի վերաբերեալ կարգադրութիւններ:—Պետերբուրգի 200-ամեակը:—Արեւմտեան 9 նահանգների զեմսովային կառավարութիւնը:

Բոլորս էլ գիտենք, որ մամուլի դրութիւնը հայերիս մէջ փայլուն է: Մի քանի փորձեր են եղել՝ բացատրելու այդ երեւոյթի պատճառները, էլ չենք ասում գրողների և ընթերցողների փոխադարձ դժգոհութիւնների և մեղադրանքների մասին: Չը նախած այդ բոլորին, մեզ թւում է, թէ հարցը այնուամենայնիւ մնացել է բաց, և ըստ սովորութեան ֆատալիստ արեւելցիների՝ ամեն ինչ թողնուել է իր բնական ընթացքին. ինչ ուզում է դուրս գայ...

Առայժմ մի կողմ թողնելով ողոստայ և թիւրքահայ մամուլը՝ տեսնենք ինչ դրութեան մէջ են Եւրոպայում, Ամերիկայում և Եգիպտոսում լոյս տեսնող հայ հրատարակութիւնները:

Այդ երկրներում ամեն մի անհատ ազատ է սկսելու ինչ

հրատարակութիւն ուղղում է: Եւ համարեա ամիս չի անցնում, որ լոյս չը տեսնեն նոր «օսկաններ»: Գաղափար տալու համար անունների առատութեան մասին՝ բաւական է թւել. «Ջիթենին», «Պատանին», «Ժողովուրդը», «Ազատ խօսքը», «Լոյսը», «Քաղաքացին», «Արտեմիսը», «Անահիտը», «Բանասէրը», «Հայ Հանդէսը», «Գութանը», «Փիւնիկը», «Արշալոյսը», «Նոր-կեանքը», «Իրաւունքը», «Հայաթերթը», «Ազատ Բեմը» և էլ չը պիտեմ ինչ և ինչը: Այդ հրատարակութիւնների մէջ կան թէ օրաթերթեր, թէ շաբաթաթերթեր և թէ ամսագիրներ: Այս վերջին անունը յաճախ տրւում է տետրակների, որոնց ամբողջ ծաւալը հաւասար է «Մուրճի» 4—8 երեսներին... Թէ որքան քմահաճոյքի ծնունդ են այդ հրատարակութիւնները և ոչ կեանքի պահանջ—այդ կարելի տեսնել և այն իրողութիւնից, որ, օրինակ, եղիպտոսում, ուր ամբողջ հայ գաղութը ունի միայն երկու ազգային վարժարան 440 աշակերտներով *), պետական ու մասնաւոր ուսումնարաններում էլ 110 ուսանող և, հետեւաբար, ամբողջ Եգիպտոսում հազիւ 10 հազար հայ հաշուի,— լոյս են տեսնում «Արտեմիս», «Փիւնիկ», «Արշալոյս», «Ազատ Խօսք», «Ազատ Բեմ» և «Ժողովուրդ» պարբերական հրատարակութիւնները, այսինքն 6 «օսկան»: Թէ բնաւ պահանջի ծնունդ չեն այդ բոլոր օրաթերթերը, շաբաթաթերթերը և ամսագիրները, այդ երևում է դրանց վախտ, ծիրեալ արտաքինից ու ներքինից. որովհետեւ եթէ առաջարկը պահանջին համապատասխան լինէր՝ ավրելու առատ հեւթ կը ստանային դրանք և սովամահ չէին լինի... Այդ «օսկանների» անաջողութեան պատճառը չի կարելի բացատրել լոկ «հայի անընթերցասիրութեամբ». այլ կերպ պէտք է դրւած լինի գործը, որ իրաւունք ունենանք միայն հայ ընթերցողին մեղադրելու:

Վերև յիշուած ազատ երկրներում լոյս տեսնող հայոց պարբերական հրատարակութիւնները պէտք է բովանդակութեան կողմից ոչ միայն յետ չը մնան նոյն տեղի օտար հրատարակութիւններից, այլ և, բացի այդ, ունենան մի առաւելութիւն, մի «պլուս», որ կարողանան գրաւել ընթերցողներին: Օտար մամուլը ապրիս է հայ ընթերցողին համաչափահային անյաբերի, գիտութեան և գրականութեան մասին միշտ թարմ տեղեկութիւններ, այդ մամուլից նա իմանում է, թէ ինչ է կատարւում այն պետութեան մէջ, որի քաղաքացին է ինքը, վերջապէս նա իբրև գործնական կեանքի մարդ՝ միշտ զանազան նոր տեղեկութիւններ է ստանում: Եթէ այդ բոլորը կարողա-

*) «Վիճակացոյց» պատրիարքարանի, 1903 թ.

նայ մատակարարել հաւասար չափով և հայոց մամուլը, բացի այդ նաև տայ ազգային կեանքից ու գրականութիւնից լուրեր, հետաքրքրական ձևով գրուած յօդուածներ և այլն, ինչու պէտք է նա չը կարողանայ մրցել օտար հրատարակութիւնների հետ Սակայն հէնց բոլոր խնդիրը նրանում է, որ մեր մամուլը չի կարողանում վերև թևած յատկութիւններով օժտուած օրգաններ ստեղծել: Իսկ այդ առաջ է դալիս նրանից, որ մենք շատ թեթև ենք նայում հրատարակութեան գործի վրայ: Բաւական է որ հայը գրաւանում մի քանի դուրուշ ունենայ և կարողանայ գրիչ չարժել—նա արդէն ձեռնարկում է այդ ազատ երկրներում իր սեփական «օսկանը» ստեղծելու. միակ յոյսը այդ «տէր խմբագիրը» կամ «տնօրէնը» դնում է իր անհատական ջանքերի վրայ. ինքն է լքցնում ամբողջ թերթը և տալիս նրան բնականաբար միակողմանի, պատուելիական մի ուղղութիւն, անձաշակ, անբովանդակ պարունակութիւն: Մշտական աշխատակիցների կազմութիւն, մշտական բաժիններ, պատրաստուած ոյժերի աջակցութիւն նա չի ունենում, որովհետև նրա գրպանի դուրուշները հազիւ բաւական են մի քիչ թուղթ գնելու, տպարանի վարձը հոգալու և «տէր տնօրէնի» կուլիական ապրուստը հայթայթելու, այն էլ իհարկէ՝ ոչ տեղական կերպով... Ի՞նչ կարելի է սղասել այդպիսի հիմքերի վրայ դրուած մամուլից: Միայն այն, ինչ որ տեսնում ենք ներկայումս: Չափազանցութիւն չի լինի, եթէ ասենք, որ եթէ այդ բոլոր թերթերն ի մի ժողովիս, մրգիս նրանց բոլորի հիւթը, դարձեալ մի կարգին օրգան չես ստանալ, որովհետև այդ բոլոր տէր տնօրէնները ի մի հաւաքուած՝ հազիւ կարող են մի լուրջ խմբագրական փարմին կազմել, ժամանակակից պահանջներին համապատասխան մի լուրջ հրատարակութիւն ստեղծել: Ասածներիցս պարզ է, որ բաւական չեն անհատների միայն բարի ցանկութիւնները թերթեր ու հանգէսներ լոյս ընծայելու համար. հարկուոր է նախ և առաջ միջոցներ գտնել, որ գործը սկզբից եւթ կանոնաւոր հիմքերի վրայ գրուի: Սխալ հաշիւ է ոչինչ կամ շատ քիչ տալ ընթերցողներին և պահանջներ անել նրանցից, մեղադրանքներ թափել նրանց գլխին: Ծիշտ է, մեր գրականասէրները սովորաբար անձնական միջոցներ չեն ունենում, որպէսզի միանգամից գործը լայն հիմքերի վրայ դնեն և գրական աշխատանքի վարձատրութեան սկզբունքը գործադրեն: Բայց ընթերցողը մեղաւոր է: Սովորաբար պատասխանում են թէ՛ «Այո, մեղաւոր է, թող մեզ շատ բաժանորդներ տան, մենք էլ ճոխ և բազմակողմանի բովանդակութեամբ թերթեր կը հրատարակենք. հայը անտարբեր է, անընթերցասէր է»...

Ընդունենք, թէ արդարացի են այդ բոլոր առարկութիւնները. սակայն քարոզներով, ողբերով շօշափելի փոփոխութիւն կը մտցնէք դոյութիւն ունեցող գրութեան մէջ. Դուք պահանջում էք մի բան, որ ոչ մի տեղ դոյութիւն չ'ունի: Ընթերցողն էլ՝ անտեսադիտական իմաստով վերցրած՝ իր տեսակի սպառող է. հայ մամուլի ղեկավարները եթէ ուզում են գրաւել այդ սպառողին, պէտք է անեն այն, ինչ որ անում են քաղաքակիրթ երկրների մամուլի ղեկավարները: Դրանք տալիս են թարմ, առատ մտաւոր անունդ, որ պատրաստում է հմուտ ու շնորհքով մարդկանց ամբողջ մի խումբ: Ժուրնալիստների այդ խումբը կապում է հրատարակութեան հետ ոչ միայն գաղափարական կապով, այլ և ապրում է իր գրչի աշխատանքով: Այնտեղ երբ անհատը ինքը միջոցներ չի ունենում պահանջուած ձեռով գործը սկսելու և առաջ տանելու, նա կամ բոլորովին չի ձեռնարկում կիսատ-պռատ, եօլատանողական մի բանի, կամ աշխատում է նախ անհրաժեշտ միջոցները գտնել՝ սովորաբար ընկերակցութիւն կազմելով: Արեւմտցին մամուլի գործին վերաբերւում է այնպիսի գործնականութեամբ, ինչպիսինով նա ձեռնարկում է մի գործարան հիմնելու կամ երկաթուղային մի գիծ անցկացնելու. եթէ հարկաւոր կապիտալը նա չ'ունի—կազմում է բաժիններով ընկերութիւն: Անկասկած՝ յաճախ ամենալաւ հիմքերի վրայ դրուած գործն անգամ սկզբում ձեւատ, զեֆիւրիս է տալիս, սակայն գործի ներքին արժողութիւնը գրաւական է, որ աստիճանաբար կը պակասի ձեւսը, և միայն յետոյ շահեկան կը դառնայ նա:

Իհարկէ՞ այն, ինչ որ օտարները կարող են շատ հեշտութեամբ կարճ ժամանակում գլուխ բերել, նոյնը գուտ հայկական իրականութեան առանձնայատկութիւնների շնորհիւ մեղանում աւելի մեծ դժուարութեամբ և դանդաղութեամբ կ'իրագործուի. սակայն գրանից չի փոխւում այն ճշմարտութիւնը, որ մամուլի աջողութիւնը կախում է նրա ներքին արժողութիւններից և իւրաքանչիւր օրգանի՝ սկզբից և եթ լաւ հիմքերի վրայ դրուելուց: Այլապէս չնչին միջոցներով, առանց պատրաստուած ոյժերի ձեռնարկուած հրատարակութիւնները սուսկերի պէս կը ծնուեն և՛ ոչ մի հետք չը թողնելով մեր հասարակական առաջադիմութեան գործում՝ կ'անհետանան: Թող 20—30 անունների փոխարէն լինեն 3—4-ը, բայց որակութեամբ ընտիրները:

Միակ բանը, որով հայ գրական ընկերակցութիւնները պիտի աշխատեն տարբերուելու օտար ընկերակցութիւններից, այդ այն է, որ երբէք գրամական չափ չը պէտք է սպասեն մերոնք. ինչ և լինի՝ մեր հանդամանքները չեն կարող բոլորովին նմանուել օտարների աւելի նպաստաւոր պայմաններին: Իւրաքանչիւր հայի

համար պէտք է պարզ լինի, որ նա իր զրամական մասնակցութեամբ օգնում է այս կամ այն օրգանը դնելու լաւ հիմքերի վրայ, որից մեծապէս շահուելու է հասարակութիւնը, առաջագիմելու է ազգը: Հասարակութեան մտաւոր-բարոյական մակերևոյթի բարձրացմամբ պէտք է հայ բաժնետէրերը չափեն իրանց շահը: Պէտք է ըմբռնել հասարակական շահի նշանակութիւնը:

Այդ հասկացել են արդէն մեր հարեան վրացիները. նրանք ունեն թիֆլիսում մի ընկերակցութիւն, որ տպարան է բացել, ամսագիր և պատկերազարդ յաւելումով մի լրագիր է հրատարակում: Հասարակական շահը ըմբռնել է ոչ միայն վրաց ինտելիգենցիան, այլև նրանց տոհմային ազնականութիւնը, որ մինչև այժմ կղզիացած էր իր կաստային առանձնաշնորհումների մէջ:

Ինչպէս յայտնի է՝ Ռուսաստանում ազնականութեան Բարձրագոյն շնորհուած են բազմաթիւ արտօնութիւններ: Այդ արտօնութիւններից նշանաւորներն են. Կայսեր անունով խնդիրքներ ներկայացնել ոչ միայն ազնական դասակարգին վերաբերեալ դէպքերում, այլ և ընդհանուր պետական նշանակութիւն ունեցող հարցերում. բացի այդ, ազնականութեան տրուած է դասակարգային ինքնավարութիւն. իւրաքանչիւր նահանգի, գաւառի տոհմային ազնականութիւնը ժողովներ է գումարում, ներկայացուցիչներ, պաշտօնական անձինք է ընտրում. ազնականութիւնը իրաւունք ունի իր պէտքերի համար դասակարգային տուրք սահմանել, առանձին գանձարան պահել, պետութեան օժանդակութեամբ սեփական բանկեր հիմնել կայլն կայլն:

Ազնականութեան այդ առանձնաշնորհումները կատարելապէս վայելում են և թիֆլիսի ու Քութայիսի տոհմային ազնւականները, որոնք համարեա բացառապէս վրացիներ են: Այդ ազնականութիւնը մօտ 30 տարի է արդէն՝ ունի թիֆլիսում և Քութայիսում բանկեր, որոնց հիմնական զրամազլխի մի մասը կազմուած է Բարձր. շնորհուած գումարով: Այդ ազնականները ունեն առանձին գանձարաններ: Թէ ինչ չափերի է հասնում այն զրամազլուխը, որ իւրաքանչիւր տարի բաշխում է ազնւականութեան պէտքերի համար, զրա մասին գաղափար է տալիս թիֆլիսի ազնականութեան այս մայիսի ժողովների որոշումները: Ազնականութեան և մասամբ վրաց հասարակական գործերի համար յատկացրուած էր 176,889 ռուբլի, որից թիֆլիսի ազն. դպրոցի պահպանութեան համար 82,184 ռ., թիֆլիսի և Թելաւի Ս. Նունէի ուսումնարանների համար նպաստ 2,000 ռ., քաղաքային Անաստասեան իգական պրոդիմնագիային՝ 1,000 ռ., թիֆ-

լիսի 3 գիմնադ. և 1 բէալ. ուսումնարանին 2,800 ռ., աղ-
նըւական ուսանողութեան նպաստ 20,000 ռ., վրաց զանազան
ընկերութիւններին և հիմնարկութիւններին 2,000 ռ., Ծինա-
մզդուարիատկարեան գիւղատնտեսական դպրոցին 7,440 ռ.,
աշնանը բացուելիք ազնւական իգական ուսումնարանի համար
10,000 ռ., Թիֆլիսում հիմնուելիք ազնւականների ապաստարան-
պանսիօնի համար 20 հազար ռ.: Պէտք է այստեղ յիշել, որ գան-
ձարանը իր վրայ է վերցնում այդ ապաստարանի պահպանու-
թեան ծախքի կէսը և սկզբնական ամբողջ ծախքը: Ազնւակա-
նութիւնը իր միջոցներից ծածկեց և՛ վրաց թատրոնի վերջին տա-
րեկան ղեկիցիարը, մօտ 5 հազար ռուբլի:

Հետաքրքրական են Թիֆլիսի և Քութայիսի ազնւական-
ների ժողովների մի երկու որոշումներն էլ.

Դեռ թարմ պէտք է լինի ընթերցողի յիշողութեան մէջ
Վրաստանի՝ Ռուսաստանի հետ միացման հարեւրամեակի առի-
թով Թագաւոր Կայսրի ցոյց տուած առատաձեւութիւնը վրաց
ազնւականութեան *): Բարձրագոյն շնորհներից մէկն էլ այն
էր, որ Թիֆլիսի և Քութայիսի նահանգների ազնւականներին
կրթական նպատակով իւրաքանչիւր տարի պետական դանձա-
րանից շնորհուով է 40 հազար: Այդ երկու նահանգների ազնւ-
ւականների ժողովներին էր թողնուած՝ յայտնելու, թէ ինչպէս
են ուզում գործադրել Բարձրագոյն նուէրը: Թիֆլիսի և Քու-
թայիսի ազնւականների մայրսեան ժողովներում որոշուեց
Բարձրագոյն նուիրած տարեկան 40 հազարով բանալ երկու նա-
հանգների ազնւականութեան համար մի ընդհանուր գիւղա-
տնտեսական միջնակարգ դպրոց: Այդ ժողովներում որոշուեց
նմանապէս խնդիրը յարուցանել, որ Թիֆլիսում բացուի մի պո-
լիտեխնիկում գիւղատնտեսական բաժանմունքով: Թողնելով մի
ուրիշ անգամի այդ բարձրագոյն ուսումնարանի հարցի քըն-
նութիւնը, մենք այստեղ միայն նկատենք, որ կրթութեան հար-
ցերում, ինչպէս տեսնում էք, ազնւականութիւնը, բնականա-
բար, աւելի իր դասակարգային շահերն է պաշտպանում. միջնա-
կարգ և գիւղատնտեսական դպրոցները առաւել նշանակութիւն
ունեն կալուածատէրերի համար, քան գիւղացիների. կալուածա-
տէրերը Անդրկովկասում մեծ մասամբ վրացի և թուրք ազնւ-
ւականներ են, իսկ յիշեալ նահանգներում ճշշող առաւելու-
թեամբ՝ վրացի թաւաղները և ազնւաւորները:

Վերջացնում ենք մեր այս տեսութիւնը՝ յիշատակելով մի
շատ տիպուր դէպք, որ տեղի ունեցաւ Մայիսի 14-ին, օր յե-

*) Տես «Մուրճ». 1901 թ. № 10, ներք. Տես. երես 244—245.

րեկով, Թիֆլիսի ամենաբազմամարդ մի տեղում, զբօսնող ահա-
դին բազմութեան աչքերի առաջ:

Այդ եղևոնագործութեան մէջ ամենից ցաւալին այն է, որ
դասակարգային կեղծ պատուից զրդուած՝ մի սպառազինուած
մարդ յարձակուում է մի անզէն հոգեկան հիւանդի վրայ և տեղն
ու տեղն ատրճանակի չորս հարուածով սպանում նրան: Լինէր
այդ դէպքը մենամարտութեան ժամանակ, երբ դարձեալ զէն-
քի վարժ և անվարժ հակառակորդները հաւասար պայմանե-
րում չեն գտնուում, դեռ էլի մի կերպ ներկի կարելի էր համարել
յանցանքը, սակայն այն ձևով որ նա տեղի ունեցաւ—սոս-
կալի մի անարդարութիւն, գազանութիւն է: Ընթերցողը ի
հարկէ՝ հասկացաւ, որ մենք ակնարկում ենք Ձովրտլի սպանու-
թեան մասին: մի անզէն, հիւանդ պատանի անզգուշութեամբ
բռնութեւ է խուռն բազմութեան մէջ մի զինուած պարոնի. այդ
վերջինն իր պատիւը չօշափուած տեսնելով ապտակում է անզգուշ
բռնողին, որը բնազդմամբ անդրադարձնում է հարուածը: Եւ
ահա զինուած Գանգելը իր պատիւը վերականգնելու համար այլ
միջոց չի գտնում, քան սոսկ սպանութիւն գործելու: Գուրս է
զալիս այդ գազանի չլոգիկայով, որ նա իրաւունք ունէր ապ-
տակելու՝ իրան անզգուշութեամբ, անգիտութեամբ բռնողին, և
այս վերջինը՝ հասարակութեան աչքի առաջ ապտակներ և հալ-
հոյանքներ կրելով՝ պէտք է ներողութիւն խնդրէր, գլուխ տար
և սուս ու փուս հեռանար...

Լ. Ս.

Մայիսի 25.

Հայոց կոնսիստորիայի 400,000 բուքլու պահանջը ժողովըր-
դական լուսաւորութեան սինիստրութիւնից.—Այս տա-
րուայ մայիսի 2-ին Թիֆլիսի դատաստանական պալատը
երկրորդ քաղաքացիական բաժնում հետեւեալ կազմով—ղե-
պարտամենտի նախագահ Ն. Պ. Սմիտտեն, պալատի ան-
դամներ՝ Գոլուբև և Բեազանով պրոկուրորի օգնական Ա.
Ադիգեօղայովի մասնակցութեամբ՝ լսեց այն յայտնի գործը,
որով Վրաստանի և Իմերեթի հայ լուսաւորչական կոնսիստո-
րիայի հաւատարմատար Ս. Ս. Մեկիք-Աղամեան պահանջ էր
յայտնում ժողովրդական լուսաւորութեան միջխտրութեանը,
յանձին կովկասեան ուսումնարանական շրջանի հողաբարձուին,
անշարժ կաքերի սեփականութեան իրաւունքի մասին:

Գործի հանգամանքները հետեւեալներն են.—Պահանջի խնդր-